



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հունիսի 2026 թվականի N 820-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Սոնա Ռուբիկի Գևորգյանի՝ խնդրանքը, **որոշում եմ.**

1. Սոնա Ռուբիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0303-0036 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 53-րդ փողոց, թիվ 4:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սոնա Ռուբիկի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅՎ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հունիսի 2026 թվականի N 819-Ա

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 18082022-07- 0060 վկայականը, տրված 2022 թվականի օգոստոսի 18-ին և հաշվի առնելով քաղաքացի Նանե Թումանյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Թույլատրել Նարգիզ, Արտուշ, Աննա,Նանե, Արթուր, Մարիամ Թումանյաններին և Լուսինե Խուրշուդյանին շարունակելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 16-րդ փողոցի թիվ 22 հասցեի հողակտորում 2024 թվականի նոյեմբերի 08-ի թիվ ՇԹ/757/1126-24 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարգիզ, Արտուշ, Աննա,Նանե, Արթուր, Մարիամ Թումանյաններին և Լուսինե Խուրշուդյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ՝



[Handwritten signature in blue ink]

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 03
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հունիսի 2026 թվականի N 818-Ա


ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 28062024-07-0095 վկայականը, տրված 2024 թվականի հունիսի 27-ին և հաշվի առնելով քաղաքացի Սերգեյ Ասատրյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1.Թույլատրել Սերգեյ Ասատրյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 141-րդ թաղամասի թիվ 46 հասցեի հողակտորում 2024 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ ՇԹ/770/1861-24 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան վերակառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սերգեյ Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 03
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հունիսի 2026 թվականի N 817-Ա

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 29012025-07- 0158 վկայականը, տրված 2025 թվականի հունվարի 29-ին և հաշվի առնելով քաղաքացի Արտակ Մարգարյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Թույլատրել Արտակ Մարգարյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 4-րդ փողոցի թիվ 19/1 հասցեի հողակտորում 2025 թվականի մայիսի 16-ի թիվ ՇԹ/770/7019-25 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան և քարե պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արտակ Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 03
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» հունիսի 2026 թվականի N 816-Ա

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման N 02032022-07-0032 վկայականը, տրված 2022 թվականի մարտի 02-ին և հաշվի առնելով քաղաքացի Արա Աղաջանյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Թույլատրել Արա Աղաջանին և Մարինե Հովհաննիսյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ձորափի փողոցի թիվ 46/1 հասցեի հողակտորում 2023 թվականի մարտի 15-ի թիվ 053 շինարարության թույլտվությամբ տրված օժանդակ շինության և լողավազանի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արա Աղաջանին և Մարինե Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 02
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» հունիսի 2026 թվականի N 815-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սոնա Ռուբիկի Գևորգյանի՝ Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0303-0036 կադաստրային համարի 0,067288 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05032026-07-0072, տրված 2026 թվականի մարտի 5-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 100-Ն որոշումը, **որոշում եմ.**

1. Սոնա Ռուբիկի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0303-0036 կադաստրային համարի 0,067288 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Առաջարկել Սոնա Ռուբիկի Գևորգյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 6 994 790 (վեց միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Կառուցապատման հետագա գործառնություններն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

4. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

5. Համայնքապետարանի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

6. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սոնա Ռուբիկի Գևորգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 02
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 814-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 414-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի մայիսի 19-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-19052026-07-0164 որոշումը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 23-ի «Ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 414-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման նախաբանի 1-ին պարբերությունում «սահմանված կարգով հաստատված հատակագիծը,» բառերից հետո լրացնել «ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024TVCNZJ, մուտքագրված 2024 թվականի նոյեմբերի 15-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅՎ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 813-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Անդրանիկ Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի՝ 1-ին փողոցի թիվ 1/93 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական հարկով ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անդրանիկ Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 812-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 244⁹-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Սարգիս Գևորգի Պողոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0407-0007 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, **որոշում եմ.**

1. Սարգիս Գևորգի Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Սարգիս Գևորգի Պողոսյանին՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Զրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Սարգիս Գևորգի Պողոսյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Սարգիս Գևորգի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 811-Ա

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ**.

1.Սուրեն Մուշեղյանին տալ տնտեսական նշանակության շինություն կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի թիվ 07-042-0381-0124 կադաստրային ծածկագրով հողամասում՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Սուրեն Մուշեղյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026թ. հունիսի 01
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 810-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Զրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի N 15-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Սարիբեկ Մխիթարի Նազարյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Սարիբեկ Մխիթարի Նազարյանին և Սիրանուշ Սևանի Գովելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք համայնք Զրվեժ գյուղ Ձորաղբյուր Այգետարածքի 1-ին զանգված, 19-րդ տեղամաս թիվ 22 հասցեի՝ 07-042-0149-0017 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12092025-07-0040), հողակտորը վերահասցեավորել և վերահասցեավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 149-րդ թաղամաս, թիվ 16:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սարիբեկ Մխիթարի Նազարյանին և Սիրանուշ Սևանի Գովելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» հունիսի 2026 թվականի N 809-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՅԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Զրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի N 15-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Նարինե Վալոդյայի Թումանյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1. Նարինե Վալոդյայի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք համայնք Ձորաղբյուր Զրվեժ այգետարածք 10-րդ թաղամաս թիվ 6 հասցեի՝ 07-042-0200-0013 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, վավերացված 2026 թվականի մայիսի 15-ին), հողակտորը վերահասցեավորել և վերահասցեավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 200-րդ թաղամաս, թիվ 13:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Վալոդյայի Թումանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅՎ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. հունիսի 01
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 808-Ա

ՄԻՔԱՅԵԼ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, **որոշում եմ.**

1.Թույլատրել Միքայել Դիլանյանին և Անի Առաքելյանին՝ շարունակելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 63 հասցեի հողամասում 2022 թվականի հունվարի 26-ի թիվ 11 շինարարության թույլտվությամբ տրված նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2026 թվականի օգոստոսի 29-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Միքայել Դիլանյանին և Անի Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 807-Ա

ԱՐԳԱՄ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԶԱ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴԻՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, **որոշում եմ**.

1.Թույլատրել Արգամ Մանուչարյանին և Ռոզա Ղարիբյանին՝ շարունակելու՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 4-րդ փողոցի թիվ 7 հասցեի հողամասում 2024 թվականի հուլիսի 31-ի թիվ 176 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տանն, օժանդակ շինությանն և պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2026 թվականի նոյեմբերի 29-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արգամ Մանուչարյանին և Ռոզա Ղարիբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 806-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 03-Ի N 505-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2026 թվականի ապրիլի 22-ի «Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Կ-22042026-07-0120 որոշումը, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կողմից 2026 թվականի մայիսի 12-ին տրամադրված տեղեկանքը, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 03-ի «Ինքնական կառուցված շինությունների օրինականացման և անշարժ գույքի վերահասցեավորման մասին» թիվ 505-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում և երկրորդ կետում «թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 167,37 քառ.մետր» բառերը փոխարինել «թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 191,44 քառ.մետր» բառերով:

2) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «486 070 (չորս հարյուր ութսունվեց հազար յոթանասուն)» բառերը փոխարինել «551 660 (հինգ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր վաթսուն)» բառերով:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 805-Ա

ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետի և հաշվի առնելով քաղաքացի Գառնիկ Սասունի Գասպարյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Թույլատրել Գառնիկ Գասպարյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 58 հասցեի հողամասում 2025 թվականի հուլիսի 16-ի թիվ ՇԹ/757/10312-25 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան և ավտոկայանատեղիի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն փոփոխված նախագծային փաստաթղթերի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գառնիկ Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 804-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Մարատ Մեխակի Դուրգարյանի լիազոր անձ Հովսեփ Ռուբենի Թովմասյանի՝ **խնդրանքը, որոշում եմ.**

1. Մարատ Մեխակի Դուրգարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0303-0033 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 54-րդ փողոց, թիվ 11:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարատ Մեխակի Դուրգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 803-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Զավեն Բակուրի Մելքոնյանի լիազոր անձ Հովսեփ Ռուբենի Թովմասյանի՝ խնդրանքը, **որոշում եմ.**

1. Զավեն Բակուրի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0303-0035 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 53-րդ փողոց, թիվ 10:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Զավեն Բակուրի Մելքոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 802-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Էդուարդ Ալեքսանդրի Մանուկյանի՝ խնդրանքը, **որոշում եմ.**

1. Էդուարդ Ալեքսանդրի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0329-0144 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 3-րդ թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 21:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էդուարդ Ալեքսանդրի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2026 թվականի N 801-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Դավիթ Խաչիկի Միրումյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0317-0174 կադաստրային համարի 0,05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08072021-07-0063, տրված 2021 թվականի հուլիսի 8-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 8-ի թիվ 55-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Դավիթ Խաչիկի Միրումյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0317-0174 կադաստրային համարի 0,05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Առաջարկել Դավիթ Խաչիկի Միրումյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 193 150 (երկու միլիոն հարյուր ինսուններեք հազար հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Կառուցապատման հետագա գործառնություններն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

4. Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

5. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

6. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Դավիթ Խաչիկի Միրումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՆԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am, jrvezh.kotayk@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


«29» մայիսի 2026 թվականի N 800-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 252-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 40-Ն հրամանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանը, **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի աշխատակազմի՝
 - 1) համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի,
 - 2) համայնքային ծառայության ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ջրվեժ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի «Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» N 252-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝



ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2026 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ

ընթացակարգերը, հարցազրույցի անցկացման կարգը, այդ թվում՝ տեղեկացնում է համայնքային ծառայողին հարցազրույցի փուլում իր պատասխանը ձայնագրելու մասին, արձանագրում և ստորագրում է նիստերի արձանագրությունները հանձնաժողովի անդամների հետ միասին՝ ապահովելով դրանց լիարժեքությունն ու օրինականությունը:

8. Համակարգչային աշխատանքների պատասխանատուն ապահովում է մրցույթի համակարգչային աշխատանքների իրականացումը, մասնավորապես՝ համակարգչային ծրագրի միջոցով ձևավորում և տպում է հանձնաժողովի կողմից կազմված կամ ընդունված ցուցակները, արձանագրությունները, որոշումները, եզրակացությունները, թեստավորման առաջադրանքների տեսքերը, ճիշտ պատասխանների ձևանմուշները, հարցազրույցի փուլի հարցատոմսերը, գնահատման թերթերը և այլն անհրաժեշտ փաստաթղթեր:

9. Մրցույթի անցկացման պատասխանատուն և համակարգչային աշխատանքների պատասխանատուն չեն համարվում հանձնաժողովի անդամներ:

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) համայնքի ղեկավարը (հանձնաժողովի նախագահ),

2) համայնքի աշխատակազմում անձնակազմի կառավարման գործառույթներ իրականացնող համայնքային ծառայողը,

3) երկուսը՝ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներ,

4) երկուսը՝ համայնքի ավագանու անդամ:

11. Հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, որոնք ընտրվում են այդ նպատակով նախապես համակարգչում գետեղված՝ պատահական ընտրության սկզբունքով կազմված թեկնածուների ցուցակից՝ յուրաքանչյուր մրցույթ անցկացնելուց ոչ շուտ, քան քսանչորս ժամ առաջ, եթե մրցույթին նախորդող օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ՝ ընտրությունը կատարվում է դրան նախորդող աշխատանքային օրը:

12. Նույն օրը նույն աշխատակազմում հաջորդականությամբ 2 և ավելի մրցույթի անցկացման դեպքում յուրաքանչյուր մրցույթի համար ձևավորվում է նոր հանձնաժողով:

13. Հանձնաժողովի անդամների կազմի պատահական ընտրությունից անմիջապես հետո՝ սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, ընտրված թեկնածուները ծանուցվում են (գրավոր կամ բանավոր)՝ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու վերաբերյալ, ինչպես նաև մրցույթի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

14. Հանձնաժողովի կազմում համակարգչային ընտրության արդյունքում ընտրված թեկնածուի (թեկնածուների) մասնակցության անհնարինության (ժամանակավոր անաշխատունակություն, բացակայություն կամ այլ հիմնավորված պատճառ) դեպքում նույն համակարգչային եղանակով կատարվում է նոր ընտրություն՝ ապահովելով սույն կարգի 10-րդ կետով սահմանված հարաբերակցության պահպանումը:

15. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է համայնքի ղեկավարի համապատասխան իրավական ակտով: Նույն ակտով համայնքի ղեկավարը նշանակում է նաև մրցույթի անցկացման պատասխանատու անձին և համակարգչային աշխատանքների պատասխանատուին:

16. Մրցույթի ընթացքում հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին անհնարին դառնալու դեպքում, հանձնաժողովի կազմը լրացուցիչ չի համալրվում:

17. Մրցույթի ընթացքում հանձնաժողովի նախագահի մասնակցության անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի մյուս անդամների կողմից, քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամներից ընտրվում է հանձնաժողովի նոր նախագահ:

18. Այն դեպքերում, երբ հանձնաժողովի որևէ անդամի, այդ թվում՝ նախագահի, մասնակցության անհնարինության հետևանքով չի ապահովվում հանձնաժողովի քվորում, ինչի արդյունքում դառնում է անհնար հանձնաժողովի հետագա գործունեությունը, հանձնաժողովը կայացնում է որոշում՝ մրցույթը հաջորդ օրը

շարունակելու վերաբերյալ, մասնակիցներին մրցույթի օրվա և ժամի մասին բանավոր կարգով տեղեկացնելու միջոցով, որի մասին կազմվում է արձանագրություն և ստորագրվում է հանձնաժողովի անդամների և մրցույթի պատասխանատուի կողմից:

19. Համակարգչային ծրագրում գետեղելու նպատակով՝ հանձնաժողովների անդամների թեկնածու հանդիսացող անձանց ցուցակները ներկայացվում են համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի, համայնքի աշխատակազմի կողմից, ընդ որում՝ համայնքի աշխատակազմը, աշխատակազմի ներկայացուցիչներից բացի, ներկայացնում է նաև համայնքի ավագանու բոլոր անդամների թեկնածությունները:

20. Հանձնաժողովների անդամների թեկնածու հանդիսացող անձանց ցուցակներում պետք է ընդգրկվեն առնվազն հետևյալ տվյալները,

1) յուրաքանչյուր թեկնածուի անունը, ազգանունը (հայրանունը), պաշտոնը, բնակության վայրը, հեռախոսահամարները՝ աշխատանքային և բջջային, էլեկտրոնային փոստի հասցեն,

2) համայնքային ծառայության այն պաշտոնը (ները), որի (որոնց) թափուր լինելու դեպքում տվյալ թեկնածուն կարող է մասնակցել համապատասխան մրցույթին՝ որպես հանձնաժողովի անդամ:

21. Հանձնաժողովների անդամների թեկնածուների ցուցակները համայնքի ղեկավարին ներկայացնելուց առաջ՝ ցուցակներում ընդգրկված անձինք լիազոր մարմնի, Կոտայքի մարզպետի աշխատակազմի, համայնքի աշխատակազմի միջոցով, գրավոր տեղեկացվում են ցուցակներում ընդգրկման վերաբերյալ:

22. Համապատասխան աշխատակազմը ցուցակները ստանալուց հետո, դրանք տարանջատում է բնագավառների և մասնագիտությունների ու համակարգչային կողավորմամբ պահպանում համակարգչում:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) համար ապահովվում է համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հավասար մատչելիություն՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից՝ ելնելով նրանց մասնագիտական գիտելիքներից և աշխատանքային ունակություններից,

2) համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվող մրցույթների թափանցիկության ու հրապարակայնության ապահովումը:

24. Հանձնաժողովը՝

1) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը, մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների փաստաթղթերը, թեստավորման անցկացման համար անհրաժեշտ ամփոփաթերթերը և տվյալ թափուր պաշտոնի անձնագրի օրինակը,

2) քննության է առնում փաստաթղթերը և որոշում է ընդունում՝ դիմած անձանց մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու մասին,

3) իր որոշմամբ հաստատում է մասնակիցների ցուցակը,

4) նախքան թեստավորում սկսելը ստուգում է ամփոփաթերթերը,

5) լիազոր մարմնի հաստատած կարգով կազմում է թեստեր՝ թեստավորման փուլը կազմակերպելու համար,

6) անցկացնում է մասնակիցների թեստավորում,

7) ստուգում և գնահատում է մասնակիցների թեստավորման առաջադրանքները,

8) ամփոփում և հրապարակում է թեստավորման արդյունքները,

9) համապատասխան ցուցանակի վրա հրապարակում է թեստավորման առաջադրանքների ճիշտ պատասխանների ձևանմուշը,

10) քննարկում է մասնակիցների բողոքները՝ կապված թեստավորման արդյունքների հետ,

11) հրապարակում է մրցույթի հաջորդ՝ հարցազրույցի, փուլ անցած մասնակիցների ցուցակը,

12) ընդունում է որոշում՝ հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին,

13) մասնակիցների հետ անցկացնում է հարցազրույց,

14) հարցազրույցից ամփջապես հետո հանձնաժողովը գնահատման թերթում արձանագրում է յուրաքանչյուր մասնակցի մասնագիտական գիտելիքների գնահատականը և հաշվարկում յուրաքանչյուր մասնակցի դրական բավերի հանրագումարը,

15) ամփոփում է մրցույթի արդյունքները,

16) քննարկում է առաջացած հարցերը,

17) հրապարակում է մրցույթի արդյունքները,

18) մրցույթի արդյունքների հրապարակումից հետո՝ նույն օրը, հանձնաժողովը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող աշխատակազմին է ներկայացնում եզրակացություն՝ հաղթող ճանաչված մասնակցի (կամ մասնակիցների) վերաբերյալ,

19) մրցույթի ավարտից հետո աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և մրցութային փաթեթը,

20) իրականացնում է իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ՝ օրենքով, սույն աշխատակարգով, ինչպես նաև թեստավորման արդյունքներին վերաբերող իրավական այլ ակտերով,

21) անհրաժեշտության դեպքում ընդունում է որոշում մրցույթը հաջորդ օրը շարունակելու մասին:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

25. Հանձնաժողովն իր աշխատանքները իրականացնում է նիստերի միջոցով:

26. Հանձնաժողովի նիստը համարվում է իրավագոր, եթե մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին:

27. Հանձնաժողովի որոշումները ընդունվում են, եթե նիստին մասնակցած անդամների կեսից ավելին կողմ է քվեարկել:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

28. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները,

2) վարում է հանձնաժողովի նիստերը,

3) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները սահմանված կարգով,

4) մինչև թեստավորումն սկսելը հանձնաժողովի անդամների ներկայությամբ, ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա փակցվող թերթը և վավերացնում է այն՝ իր ստորագրությամբ,

5) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը, հարցեր տալ մասնակիցներին՝ բարձրաձայն հայտարարելով պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցնել ճիշտ պատասխանը,

6) որոշում է մրցույթի հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ,

7) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԳԱՄԸ

29. Հանձնաժողովի անդամը՝

1) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը,

2) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն,

3) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր ուղղել մասնակիցներին՝ բարձրաձայն հայտարարելով պատասխանի ճիշտ կամ սխալ լինելը, իսկ սխալ պատասխանի դեպքում՝ ներկայացնելով ճիշտ պատասխանը,

4) հարցազրույցի արդյունքում՝ գնահատում է յուրաքանչյուր մասնակցի գործնական կարողությունները՝ մասնակիցների գործնական կարողությունների գնահատման թերթերում կատարելով համապատասխան նշումներ,

5) մասնակցում է յուրաքանչյուր մասնակցի ստացած դրական միավորների հանրագումարի հաշվարկմանը,

6) ստորագրում է մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացությունը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում՝ ստորագրության կողքին կատարում է «հատուկ կարծիքը կցվում է» գրառումը և հանձնաժողովի նախագահին է ներկայացնում իր ստորագրած հատուկ կարծիքը,

7) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք,


8) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ,

9) չի կարող ընդգրկվել հանձնաժողովի կազմում, եթե հանդիսանում է մրցույթի մասնակցի փոխկապակցված անձ՝ հանձնաժողովի անդամի ամուսինը, ամուսնու ծնողը, զավակը կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը,

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

30. Մրցույթը համարվում է ավարտված, հանձնաժողովի կողմից համապատասխան աշխատակազմին, մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) մասին եզրակացություն տալու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչելու մասին որոշում ընդունելու պահից:

31. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Հավելված 2

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
դեկավարի 2026 թվականի
մայիսի 29-ի թիվ 800-Լ որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Բ Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵՅԺ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց (այսուհետ՝ համայնքային ծառայողներ) ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատակարգը:

2.Հանձնաժողովը ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք), սույն աշխատակարգով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը ատեստավորման արդյունքների գրավոր բողոքի քննարկման և ընդունված որոշման հիման վրա կարող է սույն աշխատակարգի 5-րդ կետով նախատեսված մարմիններին միջնորդել իրենց կողմից առաջադրված հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակներից հանել և համապատասխան միջոցներ ձեռնարկել այն թեկնածուի նկատմամբ, որը լինելով հանձնաժողովի անդամ դրսևորել է սուբյեկտիվ մոտեցում, ինչպես նաև ընդգրկված լինելով հանձնաժողովի կազմում առանց նախապես տեղեկացնելու անհարգելի պատճառով չի մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:

4. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը (այսուհետ՝ լիազորված անձ), որը ատեստավորվող համայնքային ծառայողներին քացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները: Լիազորված անձը հանձնաժողովի անդամ չի համարվում:

**II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5.Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչ: Հանձնաժողովում մարզպետարանի ներկայացուցիչ չի կարող լինել համայնքի ավագանու անդամը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշվում են համայնքի ավագանու կողմից:

6.Մարզպետարանի ներկայացուցիչների մասին տվյալներն ստանալուց հետո 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարը իր որոշմամբ ստեղծում է հանձնաժողով և հաստատում դրա անհատական կազմը: Հանձնաժողովի անհատական կազմում համայնքի ղեկավարը փոփոխություններ է կատարում, եթե՝

- 1) փոխվել է համայնքի ղեկավարը,
- 2) ավագանին փոփոխել է հանձնաժողովում ընդգրկված ավագանու անդամների քանակական և (կամ) անհատական կազմը,
- 3) ներկայացվել է մարզպետարանի այլ ներկայացուցիչ (ներկայացուցիչներ):

7.Հանձնաժողովի նախագահը համայնքի ղեկավարն է: Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անհատական կազմի հաստատումից հետո 20-օրյա ժամկետում հրավիրում է հանձնաժողովի

աշխատակարգային նիստ, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահի տեղակալ, որը հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում իրականացնում է նրա լիազորությունները:

8. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իր որոշմամբ հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկել համապատասխան մասնագետի: Հանձնաժողովի կազմում մասնագետի ընդգրկման հարցը բարձրացվում է հանձնաժողովի նախագահի և (կամ) հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ: Այդպիսի նախաձեռնության դեպքում հանձնաժողովի նախագահը մրցույթի անցկացման օրվան նախորդող 7-10 օրվա ընթացքում հրավիրում է հանձնաժողովի աշխատակարգային նիստ, որում քննարկվում և սույն աշխատակարգի 17-րդ կետին համապատասխան ընդունվում է որոշում՝ տվյալ առեստավորման անցկացման ժամանակ հանձնաժողովի կազմում համապատասխան մասնագետի ընդգրկման մասին: Նշված որոշումն ընդունվելու դեպքում հանձնաժողովը հաստատում է նաև մասնագետի թեկնածությունը:

9. Հանձնաժողովի նախագահը առեստավորման անցկացումից ոչ ուշ, քան 7 օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ ծանուցում է առեստավորման անցկացման մասին:

10. Ծանուցման մեջ պետք է նշվեն՝

1) առեստավորման անցկացման օրը, ժամը և վայրը,

2) այն պաշտոնը (պաշտոնները), որը (որոնք) զբաղեցնող համայնքային ծառայողները առեստավորվում են,

3) առեստավորվող համայնքային ծառայողների թիվը:

11. Սույն աշխատակարգի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում հանձնաժողովի անդամներին պատշաճ ծանուցվում է աշխատակարգային նիստի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցի (հարցերի) մասին:

12. Լիազորված անձը նշանակվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Հանձնաժողովի խնդիրը առեստավորման միջոցով՝ որոշումն է իր զբաղեցրած պաշտոնին համայնքային ծառայողի համապատասխանության, ինչպես նաև ավելի բարձր դասային աստիճանի շնորհման նպատակահարմարության:

14. Հանձնաժողովը՝

1) աշխատակազմից ստանում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը, առեստավորման ենթակա համայնքային ծառայողների ցանկը և այդ համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի օրինակները, ծառայողական բնութագրերը և դրանց վերաբերյալ առկա առարկությունները.

2) իրականացնում է քննարկումներ առանձին հարցերի շուրջ.

3) մինչև թեստավորումն սկսելն ստուգում է ամփոփաթերթերը.

4) անցկացնում է փաստաթղթային առեստավորում.

5) սահմանված կարգով կազմում է թեստերը՝ թեստավորման փուլն անցկացնելու համար.

6) անցկացնում է համայնքային ծառայողների թեստավորում.

7) ստուգում և գնահատում է համայնքային ծառայողների թեստավորման առաջադրանքները.

8) հաստատում և հրապարակում է թեստավորման արդյունքները.

9) քննարկում է թեստավորման արդյունքների հետ կապված համայնքային ծառայողների բողոքները.

10) հրապարակում է առեստավորման հաջորդ՝ հարցազրույցի փուլ անցած համայնքային ծառայողների ցուցակը.

11) ընդունում է որոշում հարցազրույցը թեստավորման ավարտից հետո նույն օրը կամ հաջորդ օրն անցկացնելու մասին.

12) համայնքային ծառայողի հետ անցկացնում է հարցազրույց.

13) կազմում է առեստավորվողների գործնական կարողությունների գնահատման թերթեր.

14) կազմում է քվեաթերթեր.

- 15) հարցազրույցից անմիջապես հետո անցկացնում է քվեարկություն.
- 16) քվեարկության արդյունքում յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ ընդունում է որոշում.
- 17) ամփոփում է ատեստավորման արդյունքները.
- 18) յուրաքանչյուր համայնքային ծառայողի վերաբերյալ կազմում է ատեստավորման թերթ.
- 19) աշխատակազմին է հանձնում թեստավորում անցկացնելու համար ստացված, սակայն չօգտագործված ամփոփաթերթերը և ատեստավորման փաստաթղթերի փաթեթը.
- 20) իրականացնում է օրենքով, սույն օրինակելի աշխատակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ իր աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

15. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
16. Նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
17. Ընդունված է համարվում Հանձնաժողովի այն որոշումը, որն ստացել է Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայները: Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորվող համայնքային ծառայողի ատեստավորման հարցազրույցի փուլի ավարտից հետո անցկացված քվեարկության արդյունքներով ստացված ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում «համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» որոշումը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

18. Հանձնաժողովի նախագահը՝
 - 1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները.
 - 2) վարում է հանձնաժողովի նիստերը.
 - 3) կազմակերպում է թեստերի կազմման աշխատանքները՝ սահմանված կարգի համաձայն.
 - 4) մինչև թեստավորումն սկսելը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում և ստորագրում է ամփոփաթերթերը, ինչպես նաև ստուգում և իր ստորագրությամբ վավերացրած թերթը փակցնում է քվեարկության համար նախատեսված արկղի վրա.
 - 5) հարցազրույցի ժամանակ կարող է ընդհատել անհարկի ծավալված բանավեճը.
 - 6) որոշում է ատեստավորման հետ կապված հարցերի, դիմումների և բողոքների քննարկման հերթականությունը՝ համաձայնեցնելով հանձնաժողովի անդամների հետ.
 - 7) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

19. Հանձնաժողովի անդամը՝
 - 1) ստորագրում է հանձնաժողովի անդամների ներկայության թերթը.
 - 2) թեստավորման աշխատանքների նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.
 - 3) մասնակցում է հարցազրույցի անցկացմանը և կարող է հարցեր տալ ատեստավորվող համայնքային ծառայողներին.
 - 4) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, իսկ սխալ պատասխանի դեպքում տալիս է ճիշտ պատասխանը.
 - 5) մասնակցում է հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր համայնքային ծառայողի համար անցկացվող քվեարկությանը.

6) ստորագրում է ատեստավորման թերթը, իսկ հատուկ կարծիք ունենալու դեպքում ստորագրության կողքին գրառում է՝ «հատուկ կարծիքը կցվում է», հանձնաժողովի նախագահին է հանձնում իր կողմից ստորագրված հատուկ կարծիքը.

7) ծանոթանում է նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք.

8) իրականացնում է հանձնաժողովի աշխատակարգով և մյուս իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

